

րայ ինքն ալ կը հաստատէ թէ ան ձեռնադրուած է «եպիսկոպոս և առաջնորդ Կ. Պոլսոյ» (Կենսագրութիւններ Ա. 1554-1822, էջ 4):

Հետևաբար Գրիգոր վրդ. Կեսարացի ձեռնադրուած է եպիսկոպոս Կ. Պոլսոյ և ոչ թէ Կեսարիոյ վրայ, ուր պատրիարքը նտրուելէն յետոյ 1602ին գացած է, Կիլիկիա երթալու համար անկէ անցնելով:

Ուրեմն հաւանօրէն Գրիգոր վրդ. Կեսարացի 1602ին տակաւին ձեռք չէր բերած Կեսարիոյ աթոռը, ուր իր պատրիարքութենէն վանուած շրջաններուն գացած է:

«Սեպհական վիճակն իւր՝ Իւստանոյ» (Յակոբ քհ. Կեսարացի) բացատրութիւնը այս կերպով կ'արդարանայ: Զարմանալի է որ Առաքել Գալարիժեցի, քսան և հինգ տարի յետոյ 1629ին կը հաստատէ թէ դեռ վարդապետ էր և անոր հակառակօրդներէն՝ Արիստակէս վրդ. Սարբերդցի իբր թէ ասոր համար Լեհաստանի առաջնորդ Նիկոլեպոս. Թորոսովիչը կը թելադրէ չհնազանդիլ կամ կարևորութիւն չտալ անոր բանադրանքին, ըսելով թէ «դու եպիսկոպոս ես և նա վարդապետ՝ չունի իշխանութիւն ի վերայ քո» (Առաւել Գալարիժեցի, էջ 370):

Այս առեղծուածը կը մեկնէ Բարգէն